



Համարը N 108-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2018.02.21/13(1371) Հոդ.166
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 03.03.2018

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 08.02.2018
Ստորագրման ամսաթիվը 13.02.2018
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 փետրվարի 2018 թվականի N 108-Ն

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի «Ժ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1318-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան

2018 թ. փետրվարի 13
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
փետրվարի 8-ի N 108-Ն որոշման

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջներով սահմանվում են քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների տեսակները և կանաչապատման տարրերի տեսակային կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները:

2. Սույն իրավական ակտի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի բարեկարգման, վերակառուցման և նոր կառուցվող բնակավայրերի նախագծման աշխատանքների վրա:

II. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն իրավական ակտում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

1) բնակավայրերի կանաչ գոտիներ՝ բնակավայրերի կանաչապատվածության մեջ միասնական ամբողջական համակարգ՝ բնակավայրերին հարող անտառներով, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով, անտառապաշտպան շերտերով զբաղեցված տարածքներով, որոնք ունեն պաշտպանական և սանիտարահիգիենիկ նշանակություն և հանդիսանում են բնակչության հանգստավայրեր (ռեկրեացիոն գոտիներ), ունենում են անտառապտրակային գոտի և անտառատնտեսական մաս:

2) կանաչ տնկարկներ՝ բնական աճող կամ արհեստականորեն տնկված ծառերի, թփերի ու խոտաբույսերի ամբողջություն: Կանաչ տնկարկների համակարգը կազմվում է բնակավայրերի տարածքում և բնակավայրամերձ տարածքներում գտնվող տարբեր գործառական նշանակություն ունեցող տնկարկների ամբողջությունից: Ըստ գործառական նշանակության կանաչ տնկարկները լինում են՝

ա. ընդհանուր օգտագործման՝ բնակչության հանգստավայրեր հանդիսացող անտառներ, անտառապտրակներ, զբոսայգիներ, զբոսապտրակներ, այգիներ կամ պարտեզներ,

բ. սահմանափակ օգտագործման՝ բնակեցված տարածքների, դպրոցների, մանկական հիմնարկների, հասարակական շենքերի՝ կրթական, մշակութային, գիտական և այլ հաստատությունների, սպորտային կառույցների, առողջապահական հիմնարկների, արդյունաբերական կազմակերպությունների և այլ տնկարկներ,

գ. հատուկ նշանակության՝ մայրուղիների, փողոցների, ջրապաշտպան, քամապաշտպան, հակաէրոզիոն տնկարկներ, սանիտարապաշտպանական և պաշտպանական գոտիների, բուսաբանական, կենդանաբանական այգիների, ցուցահանդեսների տնկարկներ և այլն:

3) կանաչապատման տիպ՝ կանաչ տնկարկների բաղադրիչ մաս՝ զանգված, խումբ, մենածառ, ծառուղի, կենդանի ցանկապատ, եզրաշերտ, ուղղաձիգ կանաչապատման տնկարկ, քարապարտեզ, երկարաձաղկուն և մշտաձաղկուն պարտեզներ և այլն:

4) կանաչապատման տարրեր՝ կանաչապատման համար օգտագործվող ծառեր, թփեր, լիանաներ (տնկված առանձին-առանձին, խմբերով, զանգվածներով, շարքերով), ծաղկանոցներ, սիզամարգեր, զանազան խոտաբույսերի խմբավորումներ, քարաբլրակներ, ինչպես նաև տեղափոխելի սկահակներում, բուսարկղերում և ծաղկամաններում տնկված ջերմոցային բույսեր և կանաչապատման այլ միջոցներ:

5) կանաչապատման նորմ՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող կանաչապատ տարածքի նվազագույն քանակը, քառ. մ/մարդ:

6) անտառապտրակ՝ բնակավայրերի տարածքի առողջացման, բնական միջավայրում մարդկանց հանգստի, մշակութային և գեղագիտական պահանջները բավարարող բնական կամ մասամբ արհեստական ու բարեկարգված անտառազանգված, որը կազմակերպված է որոշակի լանդշաֆտաձավալահաստակագծային համակարգով՝ տնկարկների աստիճանական վերակառուցմամբ, ճանապարհների, ճեմաձառուղիների, հետիոտն արահետների, բացատների, ջրամբարների և այլնի ստեղծմամբ:

7) զբոսայգի կամ պարկ՝ ծառուղիներով, ջրային մակերեսներով, խաղահրապարակներով, քանդակներով, ճարտարապետական փոքր ձևերով, զվարճանքի կառույցներով բնական կամ արհեստական կանաչապատ տարածք՝ զբոսանքի, հանգստի, ժամանցի և այլնի համար: Զբոսայգիներն ըստ նշանակության լինում են մշակույթի և հանգստի, մանկական, մարզական, զբոսանքային, հուշահամալիրային:

8) այգի կամ պարտեզ՝ վայրի և մշակովի մրգատու ու հատապտղային ծառերով, թփերով, ծաղիկներով և այլ բույսերով ծածկված տարածք, որն ստեղծվում է բույսերի տարբեր համակցումներից: Կարող է ստեղծվել նաև որպես գեղագիտական արժեք ներկայացնող ինքնուրույն արհեստական լանդշաֆտ և ունենալ ռեկրեացիոն նշանակություն:

9) զբոսապտրակ կամ պտրակ՝ ոչ մեծ չափերի հասարակական զբոսայգի կամ այգի, որը տեղադրված է հրապարակներում կամ փողոցների խաչմերուկներում, ինչպես նաև ոչ մեծ չափերի չկառուցապատված տարածքներում, երբեմն փողոցի խորքում գտնվող շենքերի շրջակայքում և ծառայում է որպես մարդկանց հանգստավայր ու պաշտպանում փողոցային աղմուկից ու աղտոտումներից:

10) ճեմելիք՝ լայն ծառուղի ընդարձակ փողոցի մեջտեղում կամ լայն փողոց, որի երկու կողմերում ծառուղիներ են: Ստեղծվում է մայրուղիների, առափնյա և բնակելի փողոցների երկարությամբ՝ լայն գոտու ձևով, ծառերի ու թփերի

ծառուղու տեսքով.

11) ծառուղի՝ իրարից հավասար հեռավորությամբ տնկված ծառերով ու թփերով եզրավորված հետիոտնի կամ տրանսպորտային ճանապարհ.

12) անտառապուրակային գոտի՝ բնակչության զանգվածային հանգստի կազմակերպման նպատակով օգտագործվող բնակավայրի կանաչ գոտի, որն ընդգրկում է քաղաքամերձ անտառների, անտառապուրակների, ամառանոցային ավանների, գյուղատնտեսական հողերի և այլ կանաչ տնկարկների ամբողջությունը, որը կարող է ունենալ նաև անտառային տնտեսության վարման ռեժիմ՝ ուղղված անտառային լանդշաֆտների կայուն կառավարմանը, պահպանությանը, ստեղծմանն ու ձևավորմանը.

13) անտառատնտեսական մաս՝ շրջակա միջավայրը պաշտպանող և բարելավող հատկություններ ունեցող բնակավայրի կանաչ գոտու մաս, որն ունի անտառատնտեսական արտադրության զարգացման ու անտառապուրակային մասի ընդլայնման համար պահուստի ստեղծմանն ուղղված տնտեսության վարման ռեժիմ.

14) լանդշաֆտառեկրեացիոն տարածք՝ ընդգրկում է բնակավայրերի անտառները, անտառապուրակները, անտառապաշտպան գոտիները, ջրամբարները, գյուղատնտեսական հողերը և այն հանդակները, որոնք անտառապուրակների, զբոսայգիների, զբոսապուրակների, այգիների կամ պարտեզների և ճեմելիքների հետ միասին ձևավորում են բնակչության վայրերի բաց տարածքների համակարգ.

15) բարեկարգում՝ բնակչության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով բնակավայրերում իրագործվող միջոցառումներ՝ տարածքի ինժեներական նախապատրաստում, պարտեզապուրակային շինարարություն, հաղորդակցման ուղիների սարքավորում ու ձևավորում և այլն:

III. ԼԱՆԴՇԱՖՏԱՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Կախված բնակչության թվից՝ քաղաքային և գյուղական բնակավայրերը դասակարգվում են համաձայն N 1 աղյուսակի:

Աղյուսակ N 1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԿԱԽՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻՑ

Բնակավայրի տեսակը՝ ըստ բնակչության թվի	Բնակչության թիվը (հազ. մարդ)	
	քաղաքներ	գյուղեր
Խոշորագույն	500-ից ավելի	5-ից ավելի
Խոշոր	250-500	3-5
Մեծ	100-250	1-3
Միջին	50-100	0.2-1
Փոքր	20-50 10-20	0.05-0.2 մինչև 0.05

5. Ըստ նպատակային նշանակության՝ բնակավայրերի կանաչ գոտիները բաժանվում են անտառապուրակային և անտառատնտեսական գոտիների: Կանաչ գոտու անտառապուրակային գոտու չափերը համապատասխանում են N 2 աղյուսակում նշված նորմերին:

Աղյուսակ N 2

ԿԱՆԱՉ ԳՈՏՈՒ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՆՈՐՄԵՐԸ

Բնակավայրի բնակչության թվաքանակը (հազ. մարդ)	Անտառապուրակային մասի չափերը (հա/հազ. մարդ)
500-ից ավելի	40
250 - 500	25
100 - 250	20
50 - 100	15
մինչև 50	10

6. Անտառապատ գոտիներում գտնվող բնակավայրերի կանաչ գոտիների ընդհանուր մակերեսը, կախված անտառային գոտու տեսակից, անտառապատման չափից և բնակչության թվից՝ հաշվարկվում է N 3 աղյուսակում նշված նորմերի համաձայն:

Աղյուսակ N 3

ԱՆՏԱՌԱՊԱՏ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉ ԳՈՏԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՈՐՄԵՐ

Անտառային գոտու տեսակը	Անտառապատվածությունը (տոկոս)	Կանաչ գոտիների ընդհանուր մակերեսը՝ ըստ բնակավայրի բնակչության թվի (հա/հազ. մարդ)						
		500-ից ավելի	250-500	100-250	50-100	20-50	10-20	մինչև 10
Իսառն անտառների գոտի	25-ից բարձր	240	200	165	125	105	70	55
	20-25 ներառյալ	190	160	130	100	85	55	45
	15-20 ներառյալ	160	135	110	85	70	50	40
	10-15 ներառյալ	110	90	75	55	50	30	25
	5-10 ներառյալ	80	60	45	35	30	20	15
	մինչև 5 ներառյալ	36	30	25	20	17	11	10
Սաղարթավոր	25-ից բարձր	260	220	180	135	120	80	65
	20-25 ներառյալ	220	175	140	110	95	65	50
	15-20 ներառյալ	175	145	120	90	80	45	35

անտառների գոտի	10-15 ներառյալ	125	100	80	60	55	35	30
	5-10 ներառյալ	85	65	50	40	35	25	20
	մինչև 5 ներառյալ	40	35	30	20	19	13	10
Անտառատափաստանային և տափաստանային գոտի	15-ից բարձր	195	160	130	100	85	60	45
	10-15 ներառյալ	135	110	90	70	60	40	30
	5-10 ներառյալ	90	70	55	45	35	25	20
	3-5 ներառյալ	55	40	30	25	20	14	11
	մինչև 3 ներառյալ	30	25	20	16	14	9	7

7. Բնակավայրերում նախատեսվում է կանաչապատ և այլ բաց տարածքների անընդհատ զարգացող համակարգ:
 8. Տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ կազմում է՝

1) կառուցապատված բնակավայրերի համար՝ 40 տոկոսից ոչ պակաս.

2) բնակելի շրջանների համար՝ 25 տոկոսից ոչ պակաս:

9. Բնակավայրերում, որտեղ կան այնպիսի արտադրական կազմակերպություններ, որոնց համար պահանջվում է 1 կմ-ից ավելի շտապվող սանիտարապաշտպանական գոտու կազմակերպում, կանաչապատ տարածքների մակերեսն ավելացվում է 15 տոկոսից ոչ պակաս չափով:

10. Ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքների մակերեսն ընդհանուր բնակավայրի և բնակելի տարածքների համար ընդունվում է N 4 աղյուսակում և սույն կետի 1-6-րդ ենթակետերում ներկայացված նորմերի համաձայն.

Աղյուսակ N 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՆՈՐՄԵՐԸ

Ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքներ	Կանաչապատ տարածքների մակերեսը (քառ. մ/մարդ)			
	մեծ, խոշոր և խոշորագույն քաղաքներ	միջին քաղաքներ	փոքր քաղաքներ	գյուղական բնակավայրեր
Ընդհանուր բնակավայրի համար	10	6-8	8(10)*	12
Բնակելի շրջանի համար	6	6	-	-

* 20 հազար մարդուց պակաս բնակչությամբ փոքր քաղաքների համար

1) խոշորագույն, խոշոր և մեծ քաղաքներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահպանմամբ, խոշոր քաղաքային անտառների գոյություն ունեցող զանգվածները կարող են փոխակերպվել անտառապուրակների՝ բայց մեկ մարդու հաշվարկով 5 քառ. մ-ից ոչ ավելի.

2) մինչև 20 հազար բնակչության թվով փոքր քաղաքների կանաչապատ տարածքների նորմն ընդունվում է 10 քառ. մ/մարդ, իսկ 20 հազարից մինչև 50 հազար բնակչության թվով փոքր քաղաքների կանաչապատ տարածքների համար՝ 8

քառ. մ/մարդ.

3) առողջարանային քաղաքներում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմը մեծացվում է ոչ ավելի, քան 50 տոկոսով.

4) կիսաանապատային գոտու, ինչպես նաև տափաստանային ու անտառատափաստանային գոտիների բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմը կարող է ավելացվել 10-20 տոկոսով.

5) անտառներով շրջապատված, խոշոր գետերի և ջրամբարների ափին գտնվող միջին, փոքր և գյուղական բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմը կարող է պակասեցվել ոչ ավելի, քան 20 տոկոսով.

6) ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կազմում 0.5 կմ և ավելի լայնություն ունեցող խոշոր զբոսայգիների և անտառապուրակների մակերեսը կազմում է 10 տոկոսից ոչ պակաս:

11. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներից անտառապուրակներ, անտառներ, զբոսայգիներ և զբոսապուրակներ հնարավոր միաժամանակյա այցելուների թիվը (մարդ/հա) ներկայացված է N 5 աղյուսակում:

Աղյուսակ N 5

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՑԱ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ (ՄԱՐԴ/ՀԱ)

Կանաչապատ տարածքի անվանումը	Միաժամանակյա այցելուների թիվը (մարդ/հա)
Քաղաքային զբոսայգի	100
Հանգստի գոտու զբոսայգի	70
Առողջարանների զբոսայգի	50
Անտառապուրակ (մարզագետնային զբոսայգի, հիդրոլոգիական պարկ)	10
Անտառներ	1-3

12. N 5 աղյուսակում ներկայացված նորմերը կիրառվում են նաև կիսաանապատային գոտու բնակավայրերի համար, բայց 20 տոկոսով պակաս չափով:

13. Առանձին զբոսայգիների տարածքների կողմնորոշիչ հաշվեկշիռը (տարածքի բաշխումը)՝ կախված հաճախելիության մակարդակից, ներկայացված է N 6 աղյուսակում:

Աղյուսակ N 6

ԱՌԱՆՁԻՆ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ (ՏԱՐԱԾՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ)՝ ԿԱԽՎԱԾ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՑ

Զբոսայգու տեսակը	Տարածքի բաշխումը (տոկոս)	
	բարձր հաճախելիության դեպքում (100 մարդ/հա-ից բարձր)	միջին և ցածր հաճախելիության դեպքում (100 մարդ/հա-ից ցածր)
Կանաչ տնկարկներ և ջրամբարներ	65-75	75-80
Ծառուղիներ և ճանապարհներ	10-15	8-12

Հարթակներ	8-12	4-8
Կառույցներ	5-7	2-4

14. 10-50 մարդ/հա միաժամանակյա այցելուների դեպքում այցելուների շարժը կազմակերպելու համար նախատեսվում է ճանապարհաարահետային ցանց, իսկ անտառի եզրի բացատներում՝ պաշտպանիչ ծառերի տնկում: 50 մարդ/հա-ից ավելի միաժամանակյա այցելուների դեպքում նախատեսվում են անտառային լանդշաֆտը զբոսայգու լանդշաֆտի վերաձևավորելու միջոցառումներ:

15. Բնակավայրերի զբոսայգիները կառուցապատելիս նախատեսվում են մասնագիտացված՝ մանկական, մարզական, ցուցահանդեսային, կենդանաբանական, բուսաբանական և այլ այգիներ ու տնկարաններ, ընդ որում՝

- 1) մանկական այգիների նորմերը կազմում են 5 քառ. մ/մարդ.
- 2) մարզական այգիների նորմերը՝ 12 քառ. մ/մարդ:

16. Զբոսապուրակներ, զբոսայգիներ և այգիներ կամ պարտեզներ հիմնելիս առավելագույնս պահպանվում են գոյություն ունեցող տնկարկներով և ջրամբարներով տեղամասերը, իսկ այդ տարածքների մակերեսը կազմում է՝

- 1) քաղաքային զբոսայգիների համար՝ 15 հա-ից ոչ պակաս.
- 2) բնակեցված գոտու այգիների համար՝ 3 հա-ից ոչ պակաս.
- 3) զբոսապուրակների համար՝ 0.5 հա-ից ոչ պակաս.

4) զբոսայգիների և այգիների կամ պարտեզների ընդհանուր հաշվեկշռում կանաչապատված տարածքի մակերեսը կազմում է 70 տոկոսից ոչ պակաս:

17. Ճեմելիքներն ու հետիոտն ծառուղիները նախագծվում են՝ հաշվի առնելով հետիոտների զանգվածային շարժման ուղղությունը: Ճեմելիքների երկարությունը և լայնությունը որոշվում է՝ կախված փողոցի ճարտարապետական լուծումից: Ճեմելիքներում ու հետիոտն ծառուղիներում կարող են նախատեսվել կարճատև հանգստի հրապարակներ: Մեկ երկայնական հետիոտն ծառուղի ունեցող ճեմելիքի լայնությունը կազմում է 18 մ-ից ոչ պակաս՝ ըստ փողոցի առանցքի, և 10 մ-ից ոչ պակաս՝ փողոցի մեկ կողմից երթնելի մասի ու կառուցապատման միջև:

18. Մեյմիկ գոտիներում ապահովվում է ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ազատ մուտք՝ բացառելով պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը բնակելի գոտու կողմից:

IV. ԿԱՆԱԶ ԳՈՏՈՒ ԶԱՓԵՐԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ

19. Մթնոլորտային օդի վիճակի վրա ներգործող նոր ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղի ընտրության, գործող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների վերակառուցման կամ ընդլայնման դեպքում «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է սանիտարապաշտպանական գոտիների ստեղծում:

20. Սանիտարապաշտպանական գոտիների կանաչապատման համար ընտրվում են այնպիսի ծառաթփային տեսակներ, որոնք ունեն փոշին որսալու և արտանետումների նկատմամբ զազակայուն հատկություններ:

21. Սանիտարապաշտպանական գոտիները ենթակա են կանաչապատման՝ բնակելի և հասարակական կառուցապատմանը հարող մասում: Սանիտարապաշտպանական գոտիների ծառապատման շերտի նվազագույն լայնությունը կազմում է՝

- 1) մինչև 50 մետրի դեպքում՝ 10 մետր.
- 2) 50-100 մետրի դեպքում՝ 20 մետր.
- 3) 100-500 մետրի դեպքում՝ 50 մետր.
- 4) 500-1000 մետրի դեպքում՝ 100 մետր:

V. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

22. Բնակավայրերի կանաչ գոտիների տարածքային կազմակերպումը նախատեսում է՝

- 1) կանաչ գոտու տարանջատում անտառապուրակային և անտառատնտեսական մասերի.
- 2) բնակչության հանգստի վայրերի կազմակերպումը՝ չխախտելով բնական համալիրի էկոլոգիական հավասարակշռությունը.
- 3) անտառատնտեսական արտադրության զարգացումը.
- 4) ոռոգման համակարգի կառուցում՝ ելնելով կանաչ գոտու առանձնահատկություններից:

23. Կանաչ գոտու տնկարկների (բնական աճող կամ արհեստական տնկված ծառերի, թփերի ու խոտաբույսերի ամբողջության) պահպանությունն ու խնամքն ամբողջ տարվա ընթացքում կանաչապատման օբյեկտներում անցկացվող միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է ժամանակին կատարվող քաղհանները, պարարտացումը, հողացրումը,

ռոզոմբ, մաքրումը, էտումը, բույսերի ձմեռման նախապատրաստումը և այլն:

24. Բնակավայրերի կանաչ գոտիների անտառների պահպանությունը և արդյունավետ օգտագործումն ընդգրկում է անտառային տնտեսության վարումը, կենսատեխնիկական ու հակահրդեհային միջոցառումների իրականացումը, տարածքի բարեկարգումը և անտառի կողմնակի օգտագործման սահմանափակումը:

25. Բնակավայրերի կանաչ գոտիների անտառների պահպանությունը և արդյունավետ օգտագործումը ներառում է՝
1) անտառապուրակային գոտում՝ դիմացկուն և դեկորատիվ, բնակչության զանգվածային հանգստի համար օգտագործվող ծառաթփատեսակների պահպանումն ու ձևավորումը:

2) անտառատնտեսական մասում՝ բարձր արտադրողականություն ունեցող, բնակավայրերի օդային ավազանի առողջացմանը նպաստող, փայտանյութի և անտառի կողմնարդյունքի պահանջները բավարարող ծառատեսակների ձևավորումը:

3) անտառապուրակային գոտու ընդլայնման համար պահուստի ստեղծումը (ըստ բնակավայրի բնակչության թվի)՝ ա. ծառաթփատեսակների տնկարան՝ 3-5 քառ. մ/մարդ չափով,

բ. ծաղկային տեսակների տնկարան՝ 0.5 քառ. մ/մարդ չափով:

26. Անտառաբուծական աշխատանքները պետք է ընդգրկեն հատումների համակարգը և անտառավերականգնման աշխատանքները: Հատումների համակարգում նախատեսվում են՝

1) անտառապուրակային գոտում՝ լանդշաֆտի ձևավորմանն ուղղված հատումներ և սանիտարական հատումներ:

2) անտառատնտեսական մասում՝ անտառի խնամքի հատումներ, սանիտարական հատումներ, անտառավերականգնման հատումներ, ցածրաժժեք տնկարկների անտառավերակառուցման հատումներ, իսկ անտառապուրակային գոտու ընդլայնման համար նախատեսված մասերում՝ լանդշաֆտի ձևավորմանն ուղղված հատումներ:

27. Անտառավերականգնման աշխատանքներն իրականացվում են ծառերի աճեցման պայմանները հաշվի առնող ծառատեսակների ընտրման և այնպիսի միջոցառումների անցկացման եղանակով, որոնք կնպաստեն անտառի բնականոն վերականգնմանը:

28. Կանաչ գոտիների անտառապուրակային գոտում անտառային մշակաբույսերն ընտրվում են հաշվի առնելով արժեքավոր լանդշաֆտների ձևավորումը և ճանապարհների, անտառեզրերի և բացատների դեկորատիվ ձևավորումը:

29. Այն բնակավայրերում, որտեղ չկան բնական անտառներ և այլ կանաչ տարածքներ, կանաչ գոտիների անտառներն ստեղծվում են արհեստական եղանակով՝ գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածքների վրա:

30. Բնակավայրերի յուրաքանչյուր տարածքի կանաչ գոտիների չափերը կարող են նվազեցվել տարածքի մինչև 30 տոկոսի չափով՝ պահպանելով սույն իրավական ակտով սահմանված պահանջները:

VI. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

31. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակավայրերի կանաչ գոտիների կանաչապատող տեսականու ընտրությունը կատարվում է սույն իրավական ակտում ներկայացված՝ Հայաստանի Հանրապետությունում աճող ծառերի ու թփերի ցանկի և տարածքների ուղղահայաց գոտիականության համաձայն:

32. Փողոցային տնկարկների, ինչպես նաև ձեմելիքների համար կանաչապատող տեսականին ըստ ուղղահայաց գոտիականության՝

1) ստորին գոտու հյուսիսային անտառապատ շրջաններում (ծովի մակերևույթից 400-900 մ բարձրություն), Զանգեզուրում (ծովի մակերևույթից 400-1200 մ բարձրություն) և կիսաանապատային շրջաններում (ծովի մակերևույթից 800-1250 մ բարձրություն)՝ թխկի սրատերև, լայնատերև, թխկի դաշտային, նշենի սովորական, դրախտածառ, սզնի արևելյան, սերկնիլենի սովորական, սուսի արևելյան, կեռասենի, հացենի սովորական, հացենի սրապտուղ, ընկուզենի սովորական, տանձենի սովորական, տանձենի ուռատերև, տանձենի կովկասյան, բարդի նրբագեղ, բարդի ձյունապիտակ, կաղնի վրացական, կաղնի արաքսյան, ուռենի բարձրաբուն, ուռենի սպիտակ, ուռենի սպիտակ, լացող, արոսենի սովորական, արոսենի պարսկական, արոսենի հունական, լորենի կովկասյան, գիհի կազակական, ցախակեռաս կովկասյան, արնզենի կովկասյան, նոնենի, թխենի սովորական:

2) միջին գոտու հյուսիսային անտառապատ շրջաններում (ծովի մակերևույթից 900-1600 մ բարձրություն), Զանգեզուրում (ծովի մակերևույթից 1200-1800 մ բարձրություն), չորային սակավանտառ և չոր տափաստանային (ծովի մակերևույթից 1200-1850 մ բարձրություն) շրջաններում՝ թխկի սրատերև, լայնատերև, թխկի դաշտային, նշենի սովորական, դրախտածառ, սզնի արևելյան, սզնի հինգվարսանդանի, իլենի լայնատերև, հացենի սրապտուղ, հացենի սովորական, ընկուզենի սովորական, խնձորենի արևելյան, տանձենի կովկասյան, տանձենի սիրիական, տանձենի ուռատերև, թխենի սովորական, սոճի կովկասյան, կեռասենի, բալենի սովորական, արոսենի սովորական, սուսի արևելյան, բարդի նրբագեղ, բարդի ձյունապիտակ, կաղամախի, կաղնի վրացական, դրախտածառ, ուռենի բարձրաբուն, ուռենի սպիտակ, ուռենի սպիտակ, լացող, ուռենի հնգաթեջ, արոսենի պարսկական, արոսենի հունական, արոսենի երկակի, լորենի կովկասյան, թեղի էլիպաստերև, գերիմաստի ցախակեռաս կովկասյան, ցախակեռաս վրացական, ամելանիլեր կլորատերև, կոկոռչենի, գիհի կազակական, կիպրոս սովորական, հաղարջենի արևելյան, կեռասենի մահալերյան, դազիֆորա թփային (կուրիյան թեյ), զկեռենի սովորական, արնզենի կովկասյան:

3) վերին (բարձրադիր) գոտու մեզոֆիլ անտառային (ծովի մակերևույթից 1600-2000 մ բարձրություն), հարաբերական մեզոֆիլային (ծովի մակերևույթից 1800-2200 մ բարձրություն), լեռնատափաստանային և լեռնամարգագետնային (ծովի մակերևույթից 1800-2200 մ բարձրություն) շրջաններում՝ թխկի բարձր լեռնային, թխկի՝ սրատերև, թխկի՝ հիրկանյան, կեչի՝ Լիտվինովի, կեչի՝ Էլունդավոր, բոխի՝ կովկասյան, բալենի՝ սովորական, սզնի՝ արևելյան, իլենի՝ լայնատերև, հացենի՝ արևելյան, թխենի՝ սովորական, սոճի՝ կովկասյան, կաղամախի, տանձենի՝ կովկասյան, տանձենի՝ սիրիական, տանձենի՝ ուռատերև, խնձորենի՝ արևելյան, կաղնի՝ արևելյան, արոսենի՝ սովորական, արոսենի՝ երկակի, արոսենի՝ հայկական, արոսենի՝ Կուզնեցովի, լորենի՝ կովկասյան, լորենի՝ մանրատերև, թեղի՝ Էլիպաստերև, գերիմաստի, սրնգենի՝ կովկասյան, ամելանխիեր՝ կլորատերև, գլխի՝ բազմապտուղ, գլխի՝ երկարատերև, գլխի կազակական, այծուռենի, ուռենի սպիտակ, ուռենի բոսորագույն, կոկոռչենի եվրոպական, հաղարջենի արևելյան, հաղարջենի Բիրբերշտեյնի, ցախակեռաս կովկասյան, չմենի ողկուզածաղկավոր:

33. Զբոսադիրների, զբոսապուրակների և բնակավայրերի կանաչ գոտիների համար կանաչապատող տեսականին, ըստ ուղղահայաց գոտիականության՝

1) ստորին գոտում կանաչապատման համար կիրառվում են ցանկում ներկայացված բոլոր ծառերն ու թփերը, բացի մրտավարդից, հապալասից, ինչպես նաև ասորագալուս (գագազգիներ), հալոստախուս և նիտրարիա (բորակազգիներ) տեսակներից՝ ցածր դեկորատիվություն ունենալու պատճառով.

2) միջին գոտում կանաչապատման համար կիրառվում են ցանկում ներկայացված բոլոր ծառերն ու թփերը, բացի ստորին գոտու համար ոչ հարմար տեսականուց, ինչպես նաև նոնենուց, թզենուց, կովկասյան խուրմայից, փշատերև ջոնջոլենուց, սովորական ունաբիից, անտառային խաղողից, հունական շրջահյուսից, բարձր պարիլակից, սովորական բաղեղից, որոնք ջերմասեր լինելու պատճառով այս գոտում ցրտահարվում են.

3) վերին (բարձրադիր) գոտում կանաչապատման համար կիրառվում են ցանկով ներկայացված բոլոր ծառերն ու թփերը, բացի միջին գոտու համար ոչ հարմար տեսականուց, ինչպես նաև գեղեցիկ թխկուց, ասորական, վրացական թխկիներից, նոնենուց, փռչենուց, ալեհեր, մանրապտուղ բալենիներից, երկարակոթուն, վրացական, արաքսյան, ոսկեգույն կաղնիներից, սրաթփուկ գլխուց, ցաքուց, թփային հասմիկից, աղվեսաագիանման արմավաթփից, արևելյան սսուց, եփրատյան բարդուց, Տիգրանի կտկենուց, փշատերև ջոնջոլենուց.

4) Սևանա լճի ավազանում և Շիրակի բարձրավանդակում կանաչապատման համար կիրառվում են՝ թխկի սրատերև, թխկի դաշտային, ամելանխիեր կլորատերև, ծորենի սովորական, ծորենի արևելյան, ծորենի խտածաղիկ, փռչնի կովկասյան, բալենի սովորական, մամրիչ արևելյան, պայթակենի կլիկիական, պայթակենի արևելյան, ճապկի հարավային, հոնի, տիլենի սովորական, դրախտածառ, դագիֆորա թփային, լեռնաչամիչ (Էֆեդրա), փշատերև նեղատերև, իլենի լայնատերև, իլենի Էլունդավոր, բեկտենի լաստենատերև, խնձորենի արևելյան, սոճի կովկասյան, սալորենի, տանձենի արևելյան, տանձենի ուռատերև, տանձենի սիրիական, կաղնի արևելյան, կարմրան ութառեջ, կարմրան բազմաձյուղ, լորենի մանրատերև, թեղի լեռնային, թեղի Էլիպաստերև, բոնչի սովորական, մոռենի:

VII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՃՈՂ ԾԱՌԵՐԻ ԵՎ ԹՓԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հայերեն	Լատիներեն
Աբելիա ծաղկառատ	<i>Abelia floribunda</i> Decne
Ալբիցիա լենքորանյան	<i>Aibizzia julibrissin</i> Durazz.
Աղահասկիկ մերձկասպյան	<i>Halostachys caspica</i> (Pall.) C.A. Mey.
Աղտոր դարաղային	<i>Rhus coriaria</i> L.
Աղտոր բուրավետ	<i>Rhus aromatica</i> Alt.
Աղտոր թավամազ, քացախածառ	<i>Rhus typhina</i> L.
Ամելանխիեր կլորատերև	<i>Amelanchier rotundifolia</i> (Lam.) Dum.-Cours.

Ամելանխիեր ողորկ	<i>Amelanchier laevis</i> Wiog.
Ամելանխիեր հասկավոր	<i>Amelanchier spicata</i> (Lam.) C.Koch
Ամորֆա (անձնի) թփային	<i>Amorpha fruticosa</i> L.
Ամորֆա (անձնի) հուրանավոր	<i>Amorpha paniculata</i> Torr. et Gray.
Այլանթ բարձրաբուն	<i>Ailanthus altissima</i> (Mill.) Swingle
Այծուռենի	<i>Salix caprea</i> L.
Ասպիրակ սպիտակ	<i>Spiraea alba</i> Du Roi
Ասպիրակ Վանհուտտի	<i>Spiraea vanhouttei</i> (Briot) Zbl.
Ասպիրակ աղեղնաեզր	<i>Spiraea crenata</i> L.
Ասպիրակ լերդախոտատերև	<i>Spiraea Chamaedryfolia</i> L.
Ասպիրակ արևքուրիկատերև	<i>Spiraea hypericifolia</i> L.
Ասպիրակ բրգանման	<i>Spiraea pyramidata</i> Greene
Ասպիրակ ճապոնական	<i>Spiraea japonica</i> L.
Արալիա մանջուրական	<i>Aralia manshurica</i> Rurr. et Maxim.
Արմավաշուշան հալվեստերև	<i>Yucca aloifolia</i> L.
Արմավաշուշան թելատու	<i>Yucca filamentosa</i> L.
Արմավաշուշան փառահեղ	<i>Yucca gloriosa</i> L.
Արմավաթուփ աղվեսաագիանման	<i>Myricaria alopecuoides</i> Schrenk
Արոսենի Հայաստանի	<i>Sorbus hajastana</i> Gabr.
Արոսենի հայկական	<i>Sorbus armeniaca</i> Hedl.
Արոսենի ամոքիչ (ծտատանձի)	<i>Sorbus torminatis</i> (L.) Cranz.

Արոսենի հունական	<i>Sorbus graeca</i> (Spach) Hedl.
Արոսենի երկակի	<i>Sorbus dualis</i> Zinserl.
Արոսենի կովկասյան	<i>Sorbus caucasica</i> Zinserl.
Արոսենի Կուզնեցովի	<i>Sorbus kuznetzovii</i> Zinserl.
Արոսենի Մուգետտի	<i>Sorbus mougeottii</i> Soy. et Gord
Արոսենի սովորական	<i>Sorbus aucuparia</i> L.
Արոսենի պարսկական	<i>Sorbus persica</i> Hedl.
Արոսենի միջանկյալ	<i>Sorbus intermedia</i> (Ehrh.) Pers.
Արոսենի թուրքեստանյան	<i>Sorbus turcestanica</i> (Franch) Hedl.
Արոսենի տյանշանյան	<i>Sorbus tianschanica</i> Rupr.
Արջատիլենի	<i>Corylus colurna</i> L.
Աուկուբա ճապոնական	<i>Aucuba japonica</i> Thunb.
Բալենի սովորական	<i>Cerasus vulgaris</i> Mill.
Բալենի ալեհեր	<i>Cerasus incana</i> (Pall.) Spach.
Բադեղ կոլխիդյան	<i>Hedera Colchica</i> C.Koch
Բադեղ սովորական	<i>Hedera helix</i> L.
Բարդի հինաձաղկատերև	<i>Populus balsamifera</i> L.
Բարդի սպիտակ	<i>Populus alba</i> L.
Բարդի Բոլլեի	<i>Populus bolleana</i> Lauche
Բարդի մազմզուկապտղավոր	<i>Populus trichocarpa</i> Torr. et Gray
Բարդի նրբազեղ	<i>Populus gracilis</i> A. Grossh.

Բարդի կանադական	Populus deltoides Marsh.
Բարդի եփրատյան	Populus euphratica Oliver
Բարդի չինական	Populus simonii Carr.
Բարդի խոշորատերև	Populus candicans Ait.
Բարդի դափնետերև	Populus laurifolia LDB.
Բարդի բրգաձև	Populus pyramidalis Rozier
Բարդի ձյունասպիտակ	Populus nivea Willd.
Բարդի սև	Populus nigra L.
Բեկտենի լաստենատերև	Frangulaan alnus Mill.
Բոխի արևելյան, դաժի	Carpinus orientalis Mill.
Բոխի կովկասյան	Carpinus caucasica A. Grossh.
Բորակաթուփ Շոբերի	Nitraria schoberi L.
Բշտիկապտուղ ամուրյան	Physocarpus amurensis Maxim.
Բշտիկապտուղ գլխիկավոր	Physocarpus capitala (Pursh) Ktze.
Բշտիկապտուղ բոնչիատերև	Physocarpus opulifolia (L.) Maxim.
Բշտիկապտուղ միավարսանդ	Physocarpus monogyna (Torr.) A. Nelson
Բշտիկապտուղ միջանկյալ	Physocarpus intermedia (Rydb.) C.K. Schneid.
Բոնչի բուրավետ	Viburnum odoratissimum Ker.-Gaml.
Բոնչի կնճռատերև	Viburnum rhytidophyllum Hems l.
Բոնչի սովորական	Viburnum opulus L.
Բոնչի սովորական ամուլ	Viburnum opulus v.sterile DC.

Բռնչի կախված	<i>Viburnum suspensum</i> Lindl.
Բրուսսոնեթիա թղթյա	<i>Broussonetia papyrifera</i> (L.) L. Herit.
Բուդդլեյա Դավիդի	<i>Buddleia davidi</i> Franch.
Բուդդլեյա հերթատերև	<i>Buddleia alternifolia</i> Maxim.
Բուդդլեյա նեղահասկավոր	<i>Buddleia stenostachya</i> Rehd. et Wils
Բունդուկ երկտուն	<i>Gymnocladus dioicus</i> (L.) C. Koch
Գազ նենգ	<i>Astragalus insidiosus</i> Boriss.
Գազ այծնորուք	<i>Astragalus barba-caprina</i> Theod.
Գազ դուրեկան	<i>Astragalus jucundus</i> Theod.
Գազ սարսափեցնող	<i>Astragalus ferox</i> Boriss.
Գլեդիչիա սովորական	<i>Gleditschia triacanthos</i> L.
Գետնանոճի Լավսոնի	<i>Chamaecyparis lawsoniana</i> (Andr.) Parl.
Գետնանոճի թույասնման	<i>Chamaecyparis thyoides</i> B.S.P.
Գերիմաստի	<i>Viburnum lantana</i> L.
Գիհի վիրգինյան	<i>Juniperus virginiana</i> L.
Գիհի երկարատերև	<i>Juniperus oblonga</i> M.B.
Գիհի գերավշանյան	<i>Juniperus seravschanica</i> Kom.
Գիհի կազակական	<i>Juniperus sabina</i> L.
Գիհի չինական	<i>Juniperus chinensis</i> L.
Գիհի բազմապտուղ	<i>Juniperus polycarpus</i> C. Koch
Գիհի ցածրասաճ	<i>Juniperus depressa</i> Stev.

Գիհի ստորական	<i>Juniperus communis</i> L.
Գիհի սրաթելուկ (գարշահոտ)	<i>Juniperus foetidissima</i> Willd.
Գիհի թուրքմենական	<i>Juniperus rurcestanica</i> C. Fedtsch.
Դազիֆորա թփային	<i>Dasiphora fruticosa</i> (L.) Rydb.
Դափնի ազնիվ	<i>Laurus nobilis</i> L.
Դափնեկեռաս բուժիչ	<i>Laurocerasus officinalis</i> Roem.
Դափնեկեռաս լուզիտանական	<i>Laurocerasus lusitanica</i> (L.) Roem.
Դափնյակ (գայլահատ) անդրկովկասյան	<i>Daphne transcaucasica</i> Pobed.
Դափնյակ կույտավորված	<i>Daphne glomeruta</i> Lam.
Դեղձենի ստորական	<i>Persica vulgaris</i> Mill.
Դեյցիա շքեղ	<i>Deutzia gracilis</i> Sieb. et Zucc
Դեյցիա խորդուբորդ	<i>Deutzia scabra</i> Thunb.
Դժնիկ դահուրյան	<i>Rhamnus dahurica</i> Pall.
Դժնիկ մանրապտուղ	<i>Rhamnus microcarpa</i> Boiss.
Դժնիկ Պալլասի	<i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey.
Դժնիկ ստորական	<i>Rhamnus cathartica</i> L.
Դրախտաձառ, նարնջափայտ	<i>Cotinus coggygria</i> Scop.
Եզնակոխի թփային	<i>Bupleurum fruticosum</i> L.
Եղրևանի ամուրյան (լիգուստրիանա ամուրյան)	<i>Syringa amurensis</i> Rupr. (= <i>Ligustrina amurensis</i> Rupr.)
Եղրևանի թավշյա	<i>Syringa velutina</i> Kom.
Եղրևանի հունգարական	<i>Syringa josikaea</i> Jacq.

Եղրևանի Վոլֆի	<i>Syringa wolfi</i> C. K. Schneid.
Եղրևանի չինական	<i>Syringa chinensis</i> Willd.
Եղրևանի սովորական	<i>Syringa vulgaris</i> L.
Եղևին (բալասանի) ալժիրյան	<i>Abies numidica</i> de Lannoy.
Եղևին իսպանական կովկասյան	<i>Abies pinsapo</i> Boiss.
Եղևին կովկասյան	<i>Abies nordmanniana</i> (Stev.) Spach.
Եղևին (բալասանի) սիբիրական	<i>Abies sibirica</i> Ldb.
Եղևնի սիբիրական	<i>Picea obovata</i> Ldb.
Եղևնի Էնգելմանի	<i>Picea engelmani</i> Engelm.
Եղևնի կեռիկավոր արծաթագույն	<i>Picea pungens</i> v. <i>glauca</i> Belssn.
Եղևնի կեռիկավոր	<i>Picea pungens</i> Engim.
Եղևնի սովորական	<i>Picea abies</i> Karst.
Զկեռենի սովորական	<i>Mespilus germanica</i> L.
Էկզոխորդա Ալբերտի	<i>Exochorda arbertii</i> Rgt.
Էրիոբոտրիա (զկեռենի) ճապոնական	<i>Eriobotrya japonica</i> (Thunb.) Lindl.
Էվկոմիա թեղիատերև	<i>Eucommia ulmoides</i> Oliv.
Ընկուզենի սովորական	<i>Juglans regia</i> L.
Ընկուզենի մանջուրական	<i>Juglans manshurica</i> Ma[im.
Ընկուզենի սև	<i>Juglans nigra</i> L.
Թավշածառ ամուրյան	<i>Phellodendron amurense</i> Rupr.
Թավշածառ սախալինյան	<i>Phellodendron sachalinense</i> (Fr. Schmidt) Sarg.

Թեղի տերևաշատ	<i>Ulmus foliacea</i> Gilib.
Թեղի փետրաճյուղավոր	<i>Ulmus pinnato-ramosa</i> Dieck.
Թեղի գետնամերձ	<i>Ulmus pumila</i> L.
Թեղի խցանային	<i>Ulmus suberosa</i> Moench.
Թեղի խորդուբորդ	<i>Ulmus scabra</i> Mill.
Թեղի էլիպսատերև	<i>Ulmus elliptica</i> C. Koch
Թեղի հարթ	<i>Ulmus laevis</i> Pall.
Թեղի գնդաձև	<i>Ulmus densa</i> Letw.
Թզենի	<i>Ficus carica</i> L.
Թթենի սպիտակ	<i>Morus alba</i> L.
Թթենի սպիտակ, լացող	<i>Morus alba</i> f. <i>pendula</i> Dipp.
Թխենի վիրգիլյան	<i>Padus virgonoana</i> (L.) Mill.
Թխենի Մասկի	<i>Padus maackii</i> (Rupr.) Kom.
Թխենի մահալեբյան (բալենի)	<i>Padus mahaleb</i> (L.) Borkh.
Թխենի սովորական	<i>Padus racemona</i> (Lam.) Gilib.
Թխենի պենսիլվանյան	<i>Padus pensylvanica</i> (L.f.) Comb. niva
Թխենի ուշահաս	<i>Padus serotina</i> (Eh rh.) Agardh.
Թխկի հովհարաձև	<i>Acer palmatum</i> Thunb.
Թխկի հիրկանյան	<i>Acer hyrcanum</i> Fisch. et Mey.
Թխկի վրացական	<i>Acer ibericum</i> MB.
Թխկի գեղեցիկ	<i>Acer pictum</i> Thunb.

Թխկի կարմիր	<i>Acer rubrum</i> L.
Թխկի հասկավոր	<i>Acer spicatum</i> Lam.
Թխկի կեղծսուսիատերև, սպիտակ	<i>Acer pseudoplatanus</i> L.
Թխկի մանրատերև	<i>Acer mono</i> Maxim.
Թխկի սրատերև, լայնատերև	<i>Acer platanoides</i> L.
Թխկի սրատերև, գնդաձև	<i>Acer platanoides globosum</i> (Nich.) Schwerin.
Թխկի դաշտային	<i>Acer campestre</i> L.
Թխկի շաքարային	<i>Acer saccharum</i> L.
Թխկի Սեմենովի	<i>Acer semenovo</i> Rgl. et Herd.
Թխկի արծաթագույն	<i>Acer saccharinum</i> L.
Թխկի թաթարական	<i>Acer tataricum</i> L.
Թխկի բարձր լեռնային (Տրաուտվետտերի)	<i>Acer trautvetteri</i> Medv.
Թխկի հացենիատերև	<i>Acer negundo</i> L.
Թույա արևմտյան	<i>Thuja occidentalis</i> L.
Թույոպսիս խոնարհվող	<i>Thyopsis dolobrata</i> Sieb.et Zucc.
Իդեսիա բազմապտուղ	<i>Idesia polycarpa</i> Maxim.
Իլենի ելունդավոր	<i>Euonymus verrucosa</i> Scop.
Իլենի Բունգի	<i>Euonymus bungeana</i> Maxim.
Իլենի եվրոպական	<i>Euonymus europaea</i> L.
Իլենի լայնատերև	<i>Euonymus latifolia</i> Mill.
Իլենի ճապոնական	<i>Euonymus japonica</i> L.f.

Ինդիգոֆերա Ժերարդի	<i>Indigofera gerardiana</i> (Well.) Baker
Լաբուռնում անագիրո-տերև, ոսկե անձրև	<i>Laburnum anagyroides</i> Medic.
Լաստենի սպիտակ	<i>Alnus incana</i> (L.) Moench
Լեռնաչամիչ (էֆեդրա) սովորական	<i>Ephedra distachya</i> L.
Լեռնաչամիչ (էֆեդրա) բարձր	<i>Ephedra procera</i> F. et Mey.
Լիքվիդամբար խեժատու	<i>Liquidambar styraciflua</i> L.
Լիքվիդամբար ֆորմոզյան	<i>Liquidambar formosana</i> Hance
Լորենի կովկասյան	<i>Titia caucasica</i> Rupr.
Լորենի խոշորատերև	<i>Titia platifillos</i> Scop.
Լորենի մանրատերև	<i>Titia cordata</i> Mill.
Խաղող ամուրյան	<i>Vitis amurensis</i> Rupr.
Խաղող կուլտուրական	<i>Vitis vinifera</i> L.
Խաղող անտառային	<i>Vitis sylvestris</i> Gmel.
Խամերոպս ցածր	<i>Chamaerops humitis</i> L.
Խեժափիճի եվրոպական	<i>Larix decidua</i> Mill.
Խեժափիճի սիբիրական	<i>Larix sibirica</i> Ldb.
Խեժափիճի ճապոնական	<i>Larix leptolepis</i> Gord.
Խենոմելես (սերկևիլենի) ճապոնական	<i>Chaenomeles japonica</i> (Thunb.) Lindl.
Խնձորենի հասապտղային	<i>Malus baccata</i> (L.) Borkh.
Խնձորենի արևելյան	<i>Malus orientalis</i> Uglitzkich
Խնձորենի կուլտուրական	<i>Malus domestica</i> Borkh.

Խնձորենի մանջուրական	<i>Malus manshurica</i> (Maxim.) Kom.
Խնձորենի ծաղկառատ	<i>Malus floribunda</i> Sieb.
Խուրմա արևելյան	<i>Diospyros kaki</i> L. f.
Խուրմա կովկասյան	<i>Diospyros lotus</i> L.
Խենոմեղես Մաուլեի	<i>Chaenomeles maulei</i>
Ծառակործան կլորատերև	<i>Celastrus orbiculata</i> Thunb.
Շիրանենի մանջուրական	<i>Armeniaca manshurica</i> (Maxim.) Skvoriz.
Շիրանենի սովորական	<i>Armeniaca vulgaris</i> Lam.
Շիրանենի սիբիրական	<i>Armeniaca sibirica</i> (L.) Lam.
Շորենի կանադական	<i>Berberis canadensis</i> Mill.
Շորենի մանրատերև	<i>Berberis parvifolia</i> Sprague
Շորենի սովորական	<i>Berberis vulgaris</i> L.
Շորենի Տունբերգի	<i>Berberis thunbergii</i> DC.
Շորենի (կծոխուր) Վիչի	<i>Berberis veitchii</i> C.K. Schneid.
Շորենի արևելյան	<i>Berberis orientalis</i> C.K. Schneid.
Շորենի խտածաղիկ	<i>Berberis densiflora</i> Boiss. et Bushe
Կաղամախի, բարդի դողդողուն կամ անտառային	<i>Populus tremula</i> L.
Կաղնի արաքսյան	<i>Quercus araxina</i> (Trautv.) A.Grossh.
Կաղնի վրացական	<i>Quercus iberica</i> Stev. in Bteb.
Կաղնի երկարակործուն	<i>Quercus longipes</i> Stev.
Կաղնի ոսկեգույն	<i>Quercus hypochrysa</i> Stev.

Կաղնի քարե	<i>Quercus ilex</i> L.
Կաղնի շագանակատերև	<i>Quercus castaneifolia</i> C.A. Mey.
Կաղնի կարմիր	<i>Quercus rubra</i> L.
Կաղնի արևելյան	<i>Quercus macranthera</i> Fisch. et Mey
Կաղնի ամառային	<i>Quercus robur</i> L.
Կաղնի ամառային, բրգաձև	<i>Quercus robur</i> f. <i>fastigiata</i> (Lam.) Hartw. et Ruempl.
Կաղնի միրգինատերև	<i>Quercus myrsinaefolia</i> Blume.
Կաղնի տոնգանման	<i>Quercus serrata</i> Thunb.
Կաղնի խցանային	<i>Quercus suber</i> L.
Կաղնի կապտավուն	<i>Quercus glauca</i> Thunb.
Կաղնի ժայռային	<i>Quercus petraea</i>
Կամելիա լեռնային	<i>Camellia sasanqua</i> Thunb.
Կամպսիս արմատակալող	<i>Campsis padicans</i> (L.) Seem.
Կատալպա սովորական	<i>Catalpa bignonioides</i> Walt.
Կատալպա օվալատերև	<i>Catalpa ovata</i> G.Don.
Կարագանա ծառանման	<i>Caragana arborescens</i> Bam.
Կարագանա խոշորածաղիկ	<i>Caragana grandiflora</i> (MB) DC.
Կարագանա թփային	<i>Caragana fruticosa</i> (Pall.) Bess.
Կարիա պեկան, պեկան	<i>Carya pecan</i> (Marsh.) Endl. et Graebn.
Կարմրան (մոշա) արարատի	<i>Tamarix araratica</i> (Bunge) Gorschk.
Կարմրան բազմաճյուղ	<i>Tamarix ramosissima</i> Ldb.

Կարմրան ութառեջ	Tamarix octandra Bge.
Կարմրան Հոհենակերի	Tamarix hohenackeri Bge.
Կարմրան Մեյերի	Tamarix meyeri Boiss.
Կարմրան նրբապսակաթերթ	Tamarix leptopetala Bunge
Կարմրան քառառեջ	Tamarix tetrandra Pall.
Կելրեյտերիա հուրանավոր	Koelreuteria paniculata Laxm.
Կենի հաստապտղային	Taxus baccata L.
Կենսաձառ արևելյան	Biota orientalis Endl.
Կենսաձառ արևելյան, բրզաձև	Biota orientalis f. meldensis Mast.
Կենսաձառ արևելյան, գնդաձև	Biota orientalis f. decussata Mast.
Կեչի ելունդավոր	Betula verrucosa Ehrh.
Կեչի թղթյա	Betula papyrifera Marsh.
Կեչի քարե	Betula ermanii Cham.
Կեչի շինական	Betula chinensis Maxim.
Կեչի Լիտվինովի	Betula litwinovii A. Doluch
Կեչի թուրքեստանյան	Betula turkestanica Litw.
Կեչի տյանշանյան	Betula tianschanica Rupr.
Կեչի ճապոնական	Betula japonica Steb.
Կեռասենի մահալերյան	Cerasus mahaleb (L.) Mill.
Կեռասենի	Cerasus avium Moench.
Կիպրոս փայլուն	Ligustrum lucidum Ait.

Կիպրոս օվալատերև	<i>Ligustrum ovalifolium</i> Hassk.
Կիպրոս սովորական	<i>Ligustrum vulgare</i> L.
Կիպրոս ճապոնական	<i>Ligustrum japonicum</i> Thunb.
Կծոխուր ամուրյան	<i>Berberis amurensis</i> L.
Կրիպտոմերիա ճապոնական	<i>Criptomeria Japonica</i> Don.
Կոկոռոշենի եվրոպական	<i>Grossularia rectinata</i> (L.) Mill.
Կոկոռոշենի Ֆինուսաստի	<i>Grossularia cynosbati</i> (L.) Mill.
Կտտկենի կարմիր	<i>Sambucus racemosa</i> L.
Կտտկենի Տիգրանի	<i>Sambucus tigrani</i> N. Troitzky
Կտտկենի սև	<i>Sambucus nigra</i> L.
Կուսախաղող հնգատերև	<i>Parthenocissus quinquefolia</i> (L.) Planch
Հազազ բերբերյան	<i>Lycium barbarum</i> L.
Հազազ չինական	<i>Lycium chinensis</i> Mill.
Հազազ թուրքմենական	<i>Lycium turcomanicum</i> Turcz.
Հաղարջենի ալպիական	<i>Ribes alpinum</i> L.
Հաղարջենի Բիբերշտեյնի	<i>Ribes biebersteinii</i> Berl.
Հաղարջենի արևելյան	<i>Ribes orientalis</i> Desf.
Հաղարջենի հուդզոնյան	<i>Ribes hudsonianum</i> Richards.
Հաղարջենի ոսկյա	<i>Ribes aureum</i> Putsh.
Հաղարջենի կարմիր	<i>Ribes rubrum</i> L.
Հաղարջենի սև	<i>Ribes nigrum</i> L.
Հաճարենի արևելյան	<i>Fagus orientalis</i> Lipsk.

Հասմիկ թփային	Jasminum fruticans L.
Հացենի ամերիկական	Fraxinus americana L.
Հացենի սպիտակ	Fraxinu ornus L.
Հացենի նշտարածն (կանաչ)	Fraxinus lanceolata Borkh.
Հացենի սովորական	Fraxinus excelsior L.
Հացենի սովորական միատերև	Fraxinus excelsior v. diversifolia (Alt.) Lingelsch.
Հացենի սովորական լացող	Fraxinus excelsior v. pendula Alt.
Հացենի սրապտուղ	Fraxinus oxycarpa Willd.
Հացենի պենսիլվանյան	Fraxinus pensylvanica March.
Հացենի խիստ մազմզուկավոր	Fraxinus holotricha Koehne
Հացենի սոգդիական	Fraxinus sogdiana Bge
Հիբիսկուս սիրիական (սիրիական վարդ)	Hibiscus syriacus L.
Հիդրանգեա կեռիկավոր	Hydrangea aspera Buch.- Cham.
Հիդրանգեա խոշորատերև	Hydrangea macrophylla (Thunb.) DC.
Հոնի	Cornus mas L.
Չելկվա բոխիատերև	Zelkova carpinifolia (Pall.) Dipp.
Չիակասկ սովորական	Aesculus hippocastanum L.
Չիթենի եվրոպական	Olea europaea L.
Չյունապտղիկ սպիտակ	Symphoracarpus albus (L.) Blake
Չյունապտղիկ կլորավուն	Symphoracarpus orbicuditus Moench
Ճահճանոճի սովորական	Taxodium distichum (L.) Rich.
Ճապկի սպիտակ	Cornus alba L.

Ճապկի հարավային	<i>Cornus australis</i> C.A. Mey.
Ճապկի արնակարմրավուն	<i>Cornus sanguinea</i> L.
Մագնոլիա խոշորածաղիկ	<i>Magnolia grandiflora</i> L.
Մագնոլիա Սուլանժի	<i>Magnolia soutangia</i> Soul.-Bod.
Մագնոլիա եռաբլթակ	<i>Magnolia tripetata</i> L.
Մագնոլիա կոբուս	<i>Magnolia kobus</i> DC.
Մակլուրա նարնջագույն	<i>Machura aurantiaca</i> Nutt.
Մաակիտ ամուրյան	<i>Maackia amurensis</i> Rupr. et Maxim.
Մահոնիա սողացող	<i>Mahonia repens</i> (Lindl.) G. Don
Մահոնիա սովորական, սոնգենատերև	<i>Mahonia aquifolium</i> Nutt.
Մահոնիա ճապոնական	<i>Mahonia japonica</i> (Thumb.) DC.
Մամրիչ (մտրակակոթ) խաղողատերև կամ սովորական	<i>Clematis vitalba</i> L.
Մամրիչ արևելյան	<i>Clematis orientalis</i> L.
Մասրենի սովորական	<i>Rosa canina</i> L.
Մելիա ազեդարախ (հիմալայան)	<i>Melia azedarach</i> L.
Մետասեքվոյա գլխատոստրոբանման	<i>Metasequoia gtiptostroboides</i> Hu et Geng
Մայրի սալանոցյան	<i>Cedrus atlantica</i> Manetti
Մայրի հիմալայան	<i>Cedrus deodara</i> Loud
Մայրի լիբանական	<i>Cedrus libani</i> Loud
Մոշենի սովորական	<i>Rubus caesius</i> L.
Մոշենի անատոլիական	<i>Rubus anatolicus</i> Focke

Մոշենի հիմալայան	<i>Picea morinda</i> Link.
Մորմ պարսկական	<i>Solanum parsicum</i> Willd.
Մորմ քաղցրադառնավուն	<i>Solanum dulcamara</i> L.
Մրտավարդ (լեռնավարդ) կովկասյան	<i>Rhododendron caucasicum</i> Pall.
Մրտավարդ հնդկական	<i>Rhododendron indicum</i> (L.) Sweet
Մրտենի սվորական	<i>Myrtus communts</i> L.
Նշենի փշատառ	<i>Amygdalus spinosissima</i> Bge
Նշենի սվորական	<i>Amygdalus communis</i> L.
Նշենի ցածրահասակ (տափաստանային)	<i>Amygdalus nana</i> L.
Նշենի Ֆենցլի	<i>Amygdalus fenzliana</i> (Fritsch) Lipsky
Նոճի արիզոնյան	<i>Cupressus arizonica</i> Greene
Նոճի մշտադալար	<i>Cupressus sempervirens</i> L.
Նոճի խոշորապտուղ	<i>Cupressus macrocarpa</i> Hartw.
Նոճի լուզիտանյան	<i>Cupressus lusitanica</i> Mill.
Նոնենի	<i>Punica granatum</i> L.
Շագանակենի սվորական	<i>Castanea sativa</i> Mill.
Ոլտոնածառ (աղաթուփ) արծաթագույն	<i>Halimodendron halodendron</i> (Pall.) Voss.
Շրջահյուս հունական	<i>Periploca graeca</i> L.
Չիչիսան դժնիկանման	<i>Hippophae rhamnoides</i> L.
Չմենի փայլուն	<i>Cotoneaster lucida</i> Schlecht
Չմենի հորիզոնական	<i>Cotoneaster horizontalis</i> Dene

Չմենի ողկուգածաղկավոր (հաճելի)	<i>Cotoneaster racemiflora</i> (Desf.) C.Koch
Չմենի սովորական (ամբողջաեզր)	<i>Cotoneaster integerrima</i> Medic.
Չմենի ժայռային	<i>Cotoneaster saxatilis</i> A.Pojark.
Չմենի սևապտուղ	<i>Cotoneaster melanocarpa</i> Lood.
Պայթակենի հայկական	<i>Colutea armena</i> Boiss. et Huet.
Պայթակենի արևելյան	<i>Colutea orientalis</i> Mill.
Պայթակենի ծառանման	<i>Colutea arborespens</i> L.
Պայթակենի Կոմարովի	<i>Colutea komarovii</i> Takht.
Պայթակենի կլիկիական	<i>Colutea cilicica</i> Boiss. et Bal.
Պարիլյակ բարձր	<i>Smilax excelsa</i> L.
Պարրոթիա պարսկական, երկաթածառ	<i>Parrotia persica</i> C.A. Mey.
Պասանիա ուտվող	<i>Pasania edulis</i> Mak.
Պավլովիա թաղիքավոր	<i>Paulownia tomentosa</i> (Thunb.)
Պիստակենի իսկական	<i>Pistacia vera</i> L.
Պիստակենի բթատերև, իսկենի	<i>Pistacia mutica</i> Fisch.et Mey
Պոդոկարպուս խոշորատերև	<i>Podocarpus macrophyllus</i> Don.
Պոնցիրուս եռատերև	<i>Poncirus trifoliata</i> (L.) Raf.
Ջոնջոլենի փետրատերև	<i>Staphylea pinnata</i> L.
Ռոբինիա կեղծակացիա (ակացիա սպիտակ)	<i>Robinia pseudoacacia</i> L.
Ռոբինիա կեղծակացիա, նոսրապսակ	<i>Robinia pseudoacacia</i> f. <i>bessoniana</i> (Nichols.) Voss.
Ռոբինիա կեղծակացիա գնդաձև	<i>Robinia pseudoacacia</i> f. <i>umbraculifera</i> (DC.) Rehd.

Ռոբինիա փարթամ	<i>Robinia luxurians</i> (Diacr) C.R. Schneid.
Սապինդուս Դրումոնդի	<i>Sapindus drummondii</i> Hook. et Arn.
Սալորենի կուլտուրական	<i>Prunus domestica</i> L.
Սալորենի փշավոր (մամխենի)	<i>Prunus spinosa</i> L.
Սալորենի չոփած, շլորենի	<i>Prunus divaricata</i> Leb.
Սապինդուս Դրումոնդի	<i>Sapindus drummondii</i> Hook. et Arn.
Սերկևիլենի սովորական	<i>Cydonia oblonga</i> Mill.
Մեքվոյա մշտադալար	<i>Sequola sempervirens</i> Endl.
Մեքվոյադենդրոն հսկայական	<i>Sequoiadendron giganteum</i> Lindl.
Սզնի Արնոլդի	<i>Crataegus arnoldiana</i> Sarg.
Սզնի արևելյան	<i>Crataegus orientalis</i> Pall.
Սզնի Դուգլասի	<i>Crataegus douglasii</i> Lindl.
Սզնի խոշորափուշ	<i>Crataegus macroantha</i> Lodd.
Սզնի փշավոր, կարմիր լիաթերթ	<i>Crataegus oxyacantha</i> f. <i>spendens</i> C.K. Schneid.
Սզնի Մաքսիմովիչի	<i>Crataegus maximoviczii</i> C.K. Schneid
Սզնի հինգվարսանդանի	<i>Crataegus pentagyna</i> Waldst. et. Kit.
Սզնի ծուռստնակավոր	<i>Crataegus kyrtostyla</i> Fingerh.
Սզնի Շովիցի	<i>Crataegus szovitsii</i> A. Pojark
Սզնի սև	<i>Crataegus nigra</i> Waldst. et Kit.
Մդոցենի սովորական	<i>Llex aquifolium</i> L. s. l.
Սոճի Բանկսի	<i>Pinus banksiana</i> Lamb.

Մոճի Բունգի	<i>Pinus bungeana</i> Zucc.
Մոճի վեյմուտի	<i>Pinus strobus</i> L.
Մոճի հիմալայան	<i>Pinus excelsa</i> Wall.
Մոճի լեռնային	<i>Pinus montana</i> Mill.
Մոճի դեղին	<i>Pinus ponderosa</i> Dougl.
Մոճի իտալական	<i>Pinus pinea</i> L.
Մոճի դրիմյան	<i>Pinus pallasiana</i> Lamb.
Մոճի սովորական	<i>Pinus silvestris</i> L.
Մոճի ծովափնյա	<i>Pinus pinaster</i> Sob.
Մոճի պիցուսի	<i>Pinus pithyusa</i> Stev.
Մոճի Սոսնովսկու (կովկասյան կամ ելունդավոր)	<i>Pinus sosnowskyi</i> Nakai (=P. hamata (Stev.) D. Sosn.)
Մոճի սև	<i>Pinus nigra</i> Arn.
Մոճի էլդարյան	<i>Pinus eldarica</i> Medw.
Մոսի արևելյան	<i>Platanus orientalis</i> L.
Մոսի թխկիատերև	<i>Platanus acerifolia</i> Willd.
Մորբարիա արոսատերև	<i>Sorbaria sorbifolia</i> (L.) A.Br.
Մոֆոռա ճապոնական	<i>Sophora japonica</i> L.
Մոֆոռա ճապոնական, լացող	<i>Sophora japonica</i> f. <i>pendula</i> Zbl.
Մտիբաքս օբասիա	<i>Styrax obassia</i> Sieb. es Zucc.
Մրնգենի պսակավոր	<i>Philadelphus coronarius</i> L.
Մրնգենի կովկասյան	<i>Philadelphus caucasicus</i> Koehne

Սրնգենի խոշորածաղիկ	<i>Philadelphus grandiflorus</i> Willd.
Վարդ ոլորանման	<i>Rosa pisiformis</i> (Christ) D. Sosn.
Վարդ դահուրյան	<i>Rosa davurica</i> Pall.
Վարդ կորյագինի	<i>Rosa karjahinii</i> D. Sosn.
Վարդ փափուկ	<i>Rosamollis</i> Smith.
Վարդ մանրածաղիկ	<i>Rosa micrantha</i> Smith.
Վարդ առատափուշ	<i>Rosa spinosissima</i> L.
Վարդ Նիզամի	<i>Rosa nisami</i> D.Sosn.
Վարդ Պրիլիպկոյի	<i>Rosa prilipcoana</i> D. Sosn.
Վարդ Ռոոպի	<i>Rosa roopae</i> Lonacz.
Վարդ Սոսնովսկու	<i>Rosa sosnovskyana</i> Tamam.
Վարդ վահանակիր	<i>Rosa corymbifera</i> Borkh.
Վեյգելա ծաղկառատ	<i>Weigela floribunda</i> (Sieb. et Zucc.) C.Koch
Վինկա ցածրահասակ	<i>Vinca ininor</i> L.
Վիստերիա թփային	<i>Wisteria frutescens</i> (L.) Poir.
Վիստերիա չինական	<i>Wisteria sinensis</i> (Sims.) Sweet.
Տանձենի ուռատերև	<i>Pyrus salicifolia</i> Pall.
Տանձենի կովկասյան	<i>Pyrus caucasica</i> Fed.
Տանձենի սովորական	<i>Pyrus communis</i> L.
Տանձենի սիրիական	<i>Pyrus syriaca</i> Boiss.
Տանձենի տադիսի	<i>Pyrus taochia</i> Woron.
Տանձենի ուսուրական	<i>Pyrus ussuriensis</i> Maxim.

Տաքսոդիում կենիատերև	Taxodium distichum (L.) Roem.
Տերնստրեմիա գլխածաղիկ	Ternstroemia gymnanthera (Wight. et Arn.) Sprague
Տիլենի սովորական	Corylus avellana L.
Տոսախ բալեարյան	Buxus balearica Lam.
Տոսախ մշտադալար	Buxus sempervirens L.
Տոսախ կոլխիդյան	Buxus colchica Pojark.
Տոսախ մանրատերև	Buxus microphalla Sieb. et Zucc.
Տրախիկարպուս բարձր	Trachicarus excelsa H. Wendl.
Տունգի ծառ	Aleuritis fordii Hemst.
Յախակեռաս ալպիական	Lonicera alpigena L.
Յախակեռաս բուրավետ	Lonicera fragrantissima Lindl. et Paxt.
Յախակեռաս վրացական	Lonicera iberica M.B.
Յախակեռաս կովկասյան	Lonicera caucasica Pall.
Յախակեռաս կանադական	Lonicera canadensis Marsh.
Յախակեռաս այծի	Lonicera caprifolium L.
Յախակեռաս Մասկի	Lonicera maackii Maxim.
Յախակեռաս սովորական	Lonicera tatarica L.
Յախակեռաս թաթարական	Lonicera xylostium L.
Յախակեռաս տոսկանյան	Lonicera etrusca L.
Յախակեռաս ճապոնական	Lonicera japonica Thunb.
Յաքի	Paliurus spina-christi Mill.

Յերգիս եվրոպական	<i>Cercis siliquastrum</i> L.
Յերգիս կանադական	<i>Cercis canadensis</i> L.
Յեֆալոտաքսուս ֆորչունի	<i>Cephalotaxus fortunei</i> Hook.
Ունաբի սովորական	<i>Zizyphus jujuba</i> Mill.
Ուտենի սպիտակ	<i>Salix alba</i> L.
Ուտենի սպիտակ, լացող	<i>Salix alba</i> v. <i>pendula</i> hort.
Ուտենի բարձրարուն	<i>Salix excelsa</i> Gmelin Roise
Ուտենի եգիպտական	<i>Salix aegyptiaca</i> L.
Ուտենի զամբյուղի	<i>Salix viminalis</i> L.
Ուտենի նշենատերև	<i>Salix amygdaioides</i> Auderss.
Ուտենի սրատերև	<i>Salix acutifolia</i> Wild.
Ուտենի բուսրագույն	<i>Salix purpurea</i> L.
Ուտենի հնգառեջ	<i>Salix pentandroides</i> A.Skvoriz.
Փշամանդիկ տանձենատերև	<i>Atraphaxis pyrifolia</i> Bge.
Փշատենի փշավոր	<i>Elaeagnus pungens</i> Thunb.
Փշատենի արծաթագույն	<i>Elaeagnus argenta</i> Pursh.
Փշատենի նեղատերև	<i>Elaeagnus angustifolia</i> L.
Փռչնի մերկ	<i>Celtis glabrata</i> Stev.
Փռչնի արևմտյան	<i>Celtis occidentalis</i>
Փռչնի կովկասյան	<i>Celtis caucasica</i> Willd.
Փռչնի հարավային	<i>Celtis australis</i> L.

Քնարածառ վարդակակաչանման	Liriodendron tulipifera L.
Օրոճ գերմանական	Genista germanica L.
Օրոճ իսպանական	Spartium junceum L.
Օսմանթուս հոտավետ	Osmanthus fragrans (Thunb.) Lour.
Օսմանթուս տարատերև	Osmanthus heterophylus (G.Don) P.S. Green
Ֆիլոստախիս բամբուկանման	Phyllostachys bambusoides Sleb. et Zucc.
Ֆիլլերեյա նեղատերև	Phillyrea angustifolia L.
Ֆորսիցիա սվարատերև	Forsythia ovata Nakai
Ֆորսիցիա միջանկյալ	Forsythia intermedia Zab.

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան